ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Աիդա Միրումյան, Մակրոտնտեսական քաղաքականության վարչության փորձագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2024 թվականի մայիսի 20-ից մայիսի 31-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Խոցելիությունների ախտորոշում» խորագրով դասընթացին, որի ընթացքում ներկայացվել են այն հայեցակարգերը և գործիքակազմը, որոնք հնարավորություն կտան վերլուծելու և գնահատելու տնտեսության արտաքին, ֆինանսական և հարկաբյուջետային հատվածների խոցելիությունները, ճգնաժամերին հակվածությունը և առկա ռիսկերը: Ներկայացված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ քննարկված գործիքակազմի գործնական կիրառմամբ:

Ընդհանուր առմամբ, դասընթացը համապարփակ կերպով ամփոփել է խոցելիությունների և ռիսկերի գնահատման մեթոդական մոտեցումները և գործիքակազմը, որոնք հնարավորություն են տալիս առավել հիմնավոր գնահատական տալ ճգնաժամերի նկատմամբ տնտեսության դիմակայունության վերաբերյալ:

5. Քննարկված թեմաները՝

1. Մակրոտնտեսական կայունության և ճգնաժամերի հիմնահարցեր,
2. Խոցելիությունների գնահատման մոտեցումներ,
3. Հարկաբյուջետային խոցելիությունների գնահատում.
   - պարտքի կայունության և սուվերեն դեֆոլտի ռիսկի գնահատում,
   - «Սուվերեն ռիսկի և պարքի կայունության շրջանակ շուկային հասանելիություն ունեցող երկրների համար» գործիքակազմ
4. Ֆինանսական խոցելիությունների գնահատում.
   - բանկային հատվածում խոցելիությունների գնահատում. միկրո և մակրո մակարդակում ռիսկերի վերլուծություն (CAMELS, FSI)
   - ֆինանսական պարբերաշրջանների գնահատման մոտեցումներ,
   - բանկային ճգնաժամերի էությունը, պատճառները, կարգավորումները,
5. Արտաքին խոցելիությունների գնահատում.
   - արտաքին հաշվեկշռվածության գնահատում,
   - միջազգային պահուստների համարժեքության գնահատում,

6. Արժութային ճգնաժամերի կանխատեսման մեթոդներ. Արժութային ճգնաժամերի էությունը, արժութային շուկայի ճնշման համաթիվ, ռիսկերի կանխատեսման վեկտորական ավտոռեգրեսիվ, դիխոտոմիկ մոդելներ և ազդանաշանային մոտեցում,
7. Ճգնաժամերի զարգացման ուղղությունները (մուտացիա և «վարակ») և դրանց կանխատեսումը,
8. Կլիմայի փոփոխության արդյունքում ֆինանսական կայունության ռիսկերի գնահատում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացով նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ մշակված գործիքակազմով ներկայացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով: Յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ: Մասնավորապես, որպես դասընթացի ամփոփում, ներկայացվել է շնորհանդես՝ հետհամաճարակային ժամանակահատվածում Ղազախստանի Հանրապետության տնտեսության խոցելիությունների ախտորոշում: Կիրառելով ներկայացված գործիքակազմը՝ բացահայտվել են տնտեսության արտաքին, ֆինանսական և հարկաբյուջետային հատվածներում առկա խոցելիությունները, կուտակված ռիսկերը և ներկայացվել են տնտեսության դիմակայունությունը բարձրացնելուն ուղղված քաղաքականության առաջարկներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

05 հունիս, 2024թ.